SUPPORT TO THE ARMENIA-TURKEY NORMALISATION PROCESS
ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆ-ԹՈՒՐՔԻԱ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ
ERMENİSTAN-TÜRKİYE. NORMALLEŞME SÜRECİ DESTEK PROGRAMI

14 հուլիսի, 2014

Հարգելի գործընկեր

Սիրով հրավիրում ենք Ձեզ մասնակցելու «Աջակցություն Հայաստան-Թուրքիա կարգավորման գործընթացին» ծրագրի հանրային ներկայացմանը, որը տեղի կունենա սույն թվականի հուլիսի 18–ին, ժամը 12:00-14:00-ը Բեստ Վեստեռն Կոնգրես հյուրանոցի Պիկասո սրահում: 18 ամսյա ծրագիրը, որը մեկնարկել է 2014թ.-ի հունվարին, ֆինանսավորվում է Եվրոպական Միության կողմից և իրականացնում է Հայաստանի և Թուրքիայի ութ հասարակական կազմակերպություններից բաղկացած կոնսորցիումը: Հանրային ներկայացման ժամանակ քաղաքացիական հասարակությանը, տեղական և միջազգային գործընկեր կազմակերպություններին, ինչպես նաև Հայաստանի և Թուրքիայի զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներին տեղեկատվություն կտրամադրվի ամբողջ ծրագրի, ծրագրի շահառուների, ձեռքբերումների և հետագա աշխատանքների վերաբերյալ:

Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար՝ դեսպան Տրայան Հրիստեան կմասնակցի միջոցառմանը և հանդես կգա ողջույնի խոսքով, որին կհաջորդի ծրագրի ներկայացումը: Հայաստանից Եվրասիա համագործակցություն հիմնադրամի գործադիր տնօրեն՝ Գևորգ Տեր-Գաբրիելյանը, Տարածաշրջանային հետազոտությունների կենտրոնի տնօրեն՝ Ռիչարդ Կիրակոսյանը, Հանրային լրագրության ակումբի նախագահ՝ Սեդա Մուրադյանը, Անի Նավասարդյանը Սիվիլիթաս հիմնադրամից և Թուրքիայից ծրագրի հաղորդակցության համակարգող՝ Բուրջու Բեջերմենը, Հրանտ Դինք հիմնադրամից կներկայացնեն ծրագրի տարբեր բաղկացուցիչ մասերը, վերջին 6 ամիսների ընթացքում ձեռք բերված արդյունքները և հանրությանը կտրամադրեն տեղեկատվություն ծրագրի գործունեության մեջ ներգրավելու ճանապարհների վերաբերյալ:

Կից Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում օրակարգի նախնական տարբերակը:
Կազմակերպիչները կապահովեն միաժամանակյա թարգմանություն հայերենից անգլերեն և հակառակը:

Խնդրում ենք հաստատել Ձեր մասնակցությունը մինչև ս.թ. հուլիսի 17-ը ծրագրի օգնական Անի Թովմասյանի միջոցով՝ 010 251575 հեռախոսահամարով կամ atovmasyan@epfound.am էլեկտրոնային փոստով:

Կանխավ շնորհակալություն

Հարգանքով՝

(Կոնսորցիումի անունից)

Վազգեն Կարապետյան
Փոխտնօրեն
Եվրասիա Համագործակցություն Հիմնադրամ

Բուրջու Բեջերմեն
Ծրագիրհաղորդակցության համակարգող
Հրանտ Դինք հիմադրամ

***

«Աջակցություն Հայաստան-Թուրքիա կարգավորման գործընթացին» ծրագիրն իրականացվում է Հայաստանի և Թուրքիայի ութ հասարակական կազմակերպություններից բաղկացած կոնսորցիումը: Ծրագիրը իրականացվում է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ «Կայունության գործիքի» շրջանակներում:

Ծրագրի նպատակն է աջակցել քաղաքացիական հասարակության ջանքերին՝ ուղղված Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորմանը ու փակ սահմանների բացմանը, մարդկային կապերը զարգացնելու, տնտեսական ու գործարար կապերն ընդլայնելու, մշակութային և կրթական ծրագրեր իրականացնելու, ինչպես նաև անկողմնակալ տեղեկատվություն ապահովելու միջոցով:

Կոնսորցիումի անդամներն են. Հայաստանում՝ Սիվիլիթաս հիմնադրամը, Եվրասիա համագործակցություն հիմնադրամը, Հանրային լրագրության ակումբը, Տարածաշրջանային հետազոտությունների կենտրոնը, Թուրքիայում՝ Անադոլու Քյուլթյուրը, Թուրքիայի տնտեսական քաղաքականության հետազոտությունների հիմնադրամը (Տեպավ), Հելսինկյան քաղաքացիական ասամբլեան և Հրանտ Դինք հիմնադրամը:

Աջակցություն Թուրքիա-Հայաստան կարգավորման գործընթացին ծրագիրը
ֆինանսավորվում է Եվրոպական Միության կողմից